

հետեւեալ ցանկն է անուններու :

Բնորոշ է որ իւրաքանչիւր արուեստադէտ իր անունը արձանագրած է ծնրնդավայր տեղի անունով այսպէս՝ Տարօնեցի, Բարերդցի, Տաթեւացի, Բջնեցի, Ղափանցի, Վանեցի, Երեւանցի, Բաղեշցի, Համտեցի, Արձկեցի, Եւզոկիացի, Թոխատցի, Քիւթասհացի, Աղնեցի, Ծորոտեցի, Երզնկացի, Կիւմրիւշխանցի, Ձէյթունցի, Սոսեցի, Կլայեցի, Կողոնացի, Իծանացի, Լէօթօլէցի, Պաղտատցի, Կրակցի, Ղրիմեցի, Թաղարցի, Խըլկեցի, Սկեւրացի, Լամբրոնացի, Խաչնեացի, Մեծորացի, Հոռոմոսեցի, Թիֆլիզեցի, Սանահնեցի, Հաղրադեցի եւ այլն :

Եթէ մեր հաւաքածոնները ցուցակագրողները այս մասին ալ ուշադրութիւն ընեն, թէ՛ վանքերու եւ թէ՛ օտարներու մօտ գտնուած բազմահազար գրքերու յիշատակարաններէն դուրս կուգան բազմաթիւ այլ տեղերու անուններ եւս, ուր մեր հայրերը երկնած, ճգնած եւ սիրած են գրչութեան եւ գրքի պատկերադարձութեան, ինչպէս նաեւ անոնցմէ անբաժան միւս գեղարուեստները :

ԺԱ. դարէն ետք գրքերը պատկերադարձելու արուեստը հայեր բարձր կատարելութեան հասցուցած են Կիլիկիայի մէջ, ուր կարճ ժամանակի համար, վերածնուէր է հայութիւնը, երբ, անդին՝ դասական հին հայրենիքի մէջ, վերջ կը գտնեն մեծ ու պղտիկ բոլոր իշխանութիւնները :

ԳՐԶՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՎԱՐԺՈՅ ՎԱՆՔԵՐ

Արդէն ըսի, որ աւելի քան 20,000 հատոր փրկուած հասած են մեզ եւ կը գտնուին մեծ մասամբ հայ հաստատութիւններու մէջ :

Հատորներուն կից յիշատակարաններէն կը տեսնենք, որ Մեծ Հայաստանի հարիւրաւոր վանքերու մէջ գրչութեան եւ մատենաներ պատկերադարձելու արուեստի վարժոցներ են եղած Էջմիածնի, Մշոյ Ս. Կարապետի, Անիի, Հոռոմոսի («Աշխարհահռչակն»), Հաղբաղի, Սանահնի, Վարադի, Աղթամարի, Սեւանայ, Մեքենոցայ, Սաղմոսայ, Յովհաննու, Հաւուց

Թառի, Գեղարդայ («Նախադրական սուրբ ուխտ»), Հայոց Չորոյ, Աղջոց, Հերմոնի, Տաթեւու, Գլխ Չորոյ եւ այլ վանքերը :

Կիլիկիոյ՝ ՎԱՆՔԵՐ.— Սոյն արուեստը իր ծաղկման վերին աստիճանին հասեր է 12րդ դարէն սկսած, Կիլիկիայի հայ վանքերուն մէջ, որոնցմէ կը յիշուին՝ Միլիճ, Մեծքար, Մաշկեւոր, Գրազարկ («Սուրբ Ուխտ»), «Աւագ վանք»), Փոսոյ («հռչակաւոր յերկնահանգէտ անապատ»), Հոռմիլայ («Աստուածապահ Սբ. Ուխտ»), Սկէվոսայ, Կոներ, Ակներ, Սըսոյ եւ Արքակաղնի վանքեր\*):

ԱՇԽԱՐ ՀԱԿԱՆ ՎԱՐՊԵՏՆԵՐ

Վանքերէն դուրս ալ, աշխարհական մարդիկ տարուեր են գեղարուեստի այս ճիւղին մշակոյթով եւ գործեր են, պէտք է հաւատալ, վանականէն ոչինչ նուազ բարեյաջող ձեռնհասութեամբ : Վանքերէն դուրս ալ մասնաւոր աշխարհական թէ՛ հոգեւորական անհատներ զբաղեր են գրչութեամբ եւ գրքերու պատկերադարձութեան արուեստով :

(Արուեստի այս ճիւղին մէջ գործող անձերու մօտ 400 անուններու ցուցակ մը ունիմ,

\*) Geraud "Essai sur le livre" գրքին մէջ կ'ըսէ :

«Դ. դարից սկսած Ս. Հերմոմոս յանձնարարում է ձեռագիր մատենաների ընդօրինակելու գործը որպէս վանականին ամենից շատ վայելող գրադուսն» :

«Այս միւսնայն ժամանակամիջոցին Ս. Եփրեմ ասում է որ մենակեացներ զբաղուած են եղել կամ ջուլհակութիւնով կամ կողովագործութիւնով, կամ գրչագիրներ ընդօրինակելով կամ՝ մագաղաթները կարմիրով գունաւորելու արհեստներով» :

«Այս բոլորի մէջ գրչութեան արուեստը մամուսնոյ վանականների միակ գլխաւոր գրադուսն է եղել» :

Շատազօր հռչակաւոր վանքի միաբաններու մէջ կանն է եղեր, որ ամէն մէկ անգամ ստանայ՝ իր զիտցած գրադուսնն նուիրուելու համար՝ հարկաւոր գործիքները :

«Միաբանութեան մէջ հազուադէպ է եղել որ գրող չլինէին» :

Դարձեալ՝ «ամէն մի միաբան, որ գրելու վարժ եւ ընդունակ լինելով, գոյամակէր գրչութեան արուեստով գրադուսն, կարգապահական որոշ պատժի կ'ենքարկուէր (տե՛ս Lecoy, էջ 90) : Վանականը պիտի լինէր կամ գրչագիր կամ հոգագործ (տե՛ս նոյնը) :